https://doi.org/10.46991/hc.2022.17.1.101

Եվա Հարությունյան
պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերություններ բաժնի ավագ գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտքարտուղար

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հիմնաբառեր. Հայ-ճապոնական առնչություններ, առաջին ճապոնական հիմնադրամը, ճապոնական մամուլը հայերի մասին, Դիանա Աբգար, Էիչի Շիբուսավա, Ճապոնիայի աջակցությունը հայերին, դրամաշնորհ, փոխառություն, տեխնիկական սարքավորումներ:

Հայ-ճապոնական առնչությունների վերաբերյալ տեղեկություններ են հասել մեզ դեռևս XIX դարից սկսած: Դրանք մեծ մասամբ վերաբերել են առևտրային ոլորտին: Բացի տնտեսական առնչություններից՝ Ճապոնիան մշտապես աջակցել է հայերին և հետաքրքրված է եղել հայերի ճակատագրով: Դեռևս 1894 թվականից ճապոնական մամուլը պարբերաբար լուսաբանել է Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունները, ինչպես նաև 1915 թ. ցեղասպանությունը:

1922 թ. Ճապոնիայում բացվեց միջազգային մարդասիրական աջակցություն տրամադրող առաջին հիմնադրամը՝ Էիչի Շիբուսավայի ղեկավարությամբ, որի նպատակն էր աջակցել ցեղասպանությունից փրկված հայերին: Մեծ է եղել նաև Ճապոնիայի աջակցությունը հայերին 1988 թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ:

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո հայ-ճապոնական հարաբերությունները սահմանափակվում էին միայն Ճապոնիայի կողմից տրամադրվող տնտեսական աջակցությամբ՝ փորձելով օգնել Հայաստանին վերականգնել կիսաքանդ եղած տնտեսությունը: Ըստ Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության տեսակի (դրամաշնորհներ, փոխառություններ ու տեխնիկական սարքավորումներ)՝ Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում դիտարկել ենք երեք փուլով:

Արդեն 2018 թվականից սկսած՝ նկատվում են միտումներ տնտեսության ոլորտում հավասար գործընկերային համագործակցության և փոխշահավետ տնտեսական հարաբերությունների ձևավորման ուղղությամբ:

Ճապոնիայի դերը հայերին աջակցելու և Հայաստանի տնտեսության մի շարք ոլորտների զարգացման հարցում

The Role of Japan in Providing Assistance to Armenians and in Developing Several Sectors of the Economy of Armenia

Yeva Harutyunyan

PhD, senior researcher at the International Relations Department of the Institute of Oriental Studies of the NAS of the RA, scientific secretary of the Institute of Oriental Studies of the NAS of the RA

THE ROLE OF JAPAN IN THE PROVISION OF ASSISTANCE TO ARMENIANS AND IN THE DEVELOPMENT OF SEVERAL SECTORS OF THE ECONOMY OF ARMENIA

Keywords: Armenian-Japanese relations, the first Japanese aid fund, Japanese press about Armenians, Diana Abgar, Eiichi Shibusawa, Japan's assistance to Armenians, grants, loan, technical equipment.

The information about the beginning of Armenian-Japanese cooperation goes back to the 19th century, which mostly referred to the commercial sphere. Japan has always been interested in the fate of Armenians. Since 1894, the Japanese press has regularly covered the mass killings of Armenians in the Ottoman Empire, as well as the Armenian Genocide in 1915.

In 1922 the first international humanitarian aid fund, headed by Eiichi Shibusawa, was opened in Japan to support Armenian Genocide survivors.

Japan also showed a great support to Armenians during 1988's earthquake in Spitak city.

After the collapse of the Soviet Union and the restoration of independence of the Republic of Armenia, Armenian-Japanese relations were limited only to economic assistance provided by Japan in an attempt to rehabilitate the dilapidated economic and social structures of Armenia. Since 1992, the economic policy of Japan in Armenia has been observed in three stages according to the type of assistance provided by Japan to Armenia such as grants, loans and technical equipment.

Since 2018, there has been noticed a tendency towards equal partnership in the field of economy and in the development of mutually beneficial economic relations between Armenia and Japan.

Ева Арутюнян

кандидат философских наук, старший научный сотрудник отдела международных отношений Института востоковедения НАН РА, ученый секретарь Института востоковедения НАН РА

РОЛЬ ЯПОНИИ В ОКАЗАНИИ ПОМОЩИ АРМЯНАМ И В РАЗВИТИИ РЯДА ОТРАСЛЕЙ ЭКОНОМИКИ АРМЕНИИ

Ключевые слова: Армяно-японские сношения, первый японский фонд помощи,

японская пресса об армянах, Диана Абгар, Эйчи Шибусава, помощь Японии армянам, гранты, кредиты, техническое оборудование.

Сохранившиеся сведения об армяно-японских сношениях датируются началом XIX века. В основном двухсторонние отношения носили коммерческий характер.

Япония всегда внимательно следила за судьбой армян и, начиная еще с 1890-х годов, японская пресса регулярно освещала массовые погромы в Османской империи, геноцид армян 1915 года.

В 1922 г. в Японии был открыт первый международный фонд гуманитарной помощи, возглавляемый Эйчи Шибусавой. Целью деятельности фонда являлось предоставление помощи армянам, выжившим после геноцида.

Неоценима также помощь Японии после Спитакского землетрясения 1988 года.

После распада Советского Союза и восстановления независимости в Армении, армяно-японские отношения ограничивались только экономической помощью, предоставляемой Японией в виде грантов, кредитов и технического оборудования. Вид предоставляемой помощи определялся поэтапно, в силу стабилизации экономики Армении и роста ВВП. В связи с этим, в статье рассматривается трёхэтапная экономическая политика Японии по отношению к Армении, начиная с 1992 года.

С 2018 года наблюдается тенденция к равноправному партнерству в сфере экономики и развития взаимовыгодных экономических отношений между Японией и Арменией.

* * *

Ներածություն: Հոդվածի նպատակն է ներկայացնել Ճապոնիայի դերն ու նշանակությունը հայերին աջակցելու գործում, և ուսումնասիրել նորանկախ Հայաստանում Ճապոնիայի տնտեսական քաղաքականության փուլային զարգացումը՝ միտված աջակցելու տնտեսության վերականգնմանը:

Թեմայի կարևորությունը երկկողմ հարաբերությունների նորովի վերաիմաստավորումն է, Ճապոնիայի կառավարության և ճապոնացիների կողմից հայերին տրամադրված աջակցության արժևորումը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մի շարք թիրախային ոլորտների զարգացման հարցում Ճապոնիայի դերի գնահատումը:

Թեմայի ուսումնասիրությունն իրականացվել է վերլուծական ու պատմական մեթոդի կիրառմամբ:

Հայ-ճապոնական տնտեսական առնչությունները (XIX-XX դդ.) և ճակատագրական պահերին ճապոնացիների աջակցությունը հայերին: Հայաստանը և Ճապոնիան, թեև տարածքային առումով իրարից հեռու են, սակայն նման են միմյանց այնպիսի հարցերում, ինչպիսին են՝ բնական ռեսուրսների սակավությունը, բնական աղետները, թշնամիներով շրջապատված լինելու հանգամանքը:

Ճապոնիայի վերաբերյալ տեղեկություններ են հասել մեզ դեռևս հին հայկական տպագիր քարտեզներից («Համատարած աշխարհացոյց» հայերեն տպագիր քարտեզ, Ամստերդամ, 1695 թ.), ինչպես նաև պահպանվել է տեղեկատվություն հայ տպագիր գրականության մեջ (Ղուկաս Ինճիճյանի աշխարհագրական աշխատություն (1805 թ.),

«Ճաբոններուն վրայ տեղեկութիւններ», Վենետիկի «Բազմավեպ» հանդես (1848 թ.)) (Բախչինյան, 2018, 14-15): Վկայություններ են առկա նաև Ճապոնիայի կառավարության կողմից հայերին շնորհված շքանշանի և վկայագրերի մասին (օսմանյան թարգման Միքայել Կյուլլապյան, «Սոլիլ Լուվան» շքանշան, 1888 թ., պոլսահայ գործիչներ Տիրան բեյ և Արթին փաշա Տատյան, վկայագրեր) (Բախչինյան, 2018, 16): Առկա տեղեկատվությունները վկայում են հայ-ճապոնական դարավոր առնչությունների առկայության և հայերի կողմից Ճապոնիայի նկատմամբ հետաքրքրության մասին:

XIX դարում, երբ Ճապոնիան մի քանի դար մեկուսացումից հետո բացեց իր նավահանգիստներն աշխարհի առջև, Հնդկաստանի հայ առևտրականներին պատկանող նավերը մուտք գործեցին երկիր: 1870 թ. Կալկաթայի հարուստ կազմակերպություններից մեկը՝ «Աբգար և ընկերությունը», նավագնացության ծառայություններ է իրականացրել դեպի Ճապոնիա: 1880-ական թթ. կեսերին այդ կազմակերպությունը Ճապոնիայի մի շարք քաղաքներ (Կոբեն, Յոկոհաման և Նագասակին) կապել է Սինգապուրի, Պենանգ կղզու, Հոնկոնգի ու Կալկաթայի հետ, և հնդկահայ վաճառականների շնորհիվ ճապոնական ապրանքներն արտահանվել են տարբեր երկրներ (Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 84-85): XIX դարի վերջին բաքվեցի հայ գործարար Ալեքսանդր Մանթաշյանն իր գործարանի նավթն արտահանել է ինչպես Չինաստան, այնպես էլ՝ Ճապոնիա (Բախչինյան, 2018, 17): Արդեն 1890-ականներին Ճապոնիա սկսեց ներկրվել նաև Երևանի կոնյակի գործարանի արտադրանքը (Առաքելյան, 2006, 31): Վկայություններ են առկա նաև 1890-ական թթ. վերջին Ինդոնեզիայի հայ վաճառականների, ինչպես նաև 1910-1920-ական թթ. Վլադիվոստոկի հայկական կոմիտեի նախագահ Թովմասյանի կողմից Ճապոնիայից ապրանքներ ներկրելու մասին (Բախչինյան, 2018, 18):

Այսպիսով, թեև սակավաթիվ են հայ-ճապոնական տնտեսական առնչությունների վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները, սակայն դրանց առկայությունը, սկսած դեռևս XIX դարից, վկայում է երկու հինավուրց ազգերի միմյանց նկատմամբ ունեցած հետաքրքրությունների մասին:

Հատկանշական է, որ հայ-ճապոնական առնչությունները չեն սահմանափակվել միայն առևտրական հարաբերություններով: Ճապոնիան ու ճապոնացիները երբեք անտարբեր չեն եղել հայ ժողովրդի ճակատագրի և Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունների նկատմամբ, որոնք, սկսած դեռևս 1894 թվականից, պարբերաբար լուսաբանվել են ճապոնական «Ասահի» և «Յոմուրի» թերթերում: Նշենք, որ 1894-1909 թթ. ընթացքում «Յոմուրի» ու «Ասահի» թերթերից յուրաքանչյուրը հրատարակել է 50-ից ավել նյութեր՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի՝ «հայկական դեպքերի», Համիդյան կոտորածների, Օսմանյան կայսրությունում բարեփոխումներ իրականացնելուն ուղղված պահանջներին, ինչպես նաև հետագայում՝ 1909 թ. Ադանայում տեղի ունեցած ջարդերին: Վերոնշյալ թերթերն անդրադարձել են նաև 1915 թ. ցեղասպանությանը (Hovhannisyan, Astghik, Japanese Media Coverage of the Armenian Genocide, 1894-1920s):

1918 թ.՝ հայոց պետականության կորստից 600 տարի անց, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:

Ճապոնիան առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը, և 1920 թ. Ճապոնիայում որպես Հայաստանի հյուպատոս նշանակվեց գրող և հրապարախոս Դիանա Աբգարը (Անահիտ Աղաբեկյան-Աբգարյան, 1859-1937 թթ.): Դ. Աբգարն առաջին կին հյուպատոսն էր աշխարհու,մ և նրա ներդրումն անգնահատելի է հայ ժողովրդին աջակցելու հարցում: Երբևիցե չլինելով հայրենիքում, սակայն ողջ կյանքը տառապելով հայրենիքի ցավով՝ Աբգարն օգնել է թուրքական ու ռուսական լծից փախած հարյուրավոր հայերին Ճապոնիայով տեղափոխվել երրորդ երկիր: Մեծ էր նրա դերը նաև փախստականների աջակցման հարցում (Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 171):

1922 թ. Ճապոնիայում բացվեց «Հայ օգնության ֆոնդ» (The Armenian relief fund) միջազգային մարդասիրական աջակցություն տրամադրող *առաջին հիմնադրամը*՝ Օսմանյան կայսրության ոճրագործություններից ողջ մնացած հայերին զորակցություն տրամադրելու նպատակով (Babkenian, Vicken, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide): Հատկանշական է, որ հիմնադրամի ստեղծման գաղափարը պատկանում էր Օսմանյան կայսրությունում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուին, որի առաջարկով դեռևս 1915 թ. ստեղծվել էր «Ամերիկյան հանձնաժողով հայ և սիրիացի տուժածների համար» հիմնադրամը, որը հետագայում վերանվանվեց «Մերձավոր Արևելքին տրամադրվող օգնություն» անվամբ: Արդեն 1922 թ. Ամերիկայի միաբանության նախարար և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում «Կարմիր խաչի» հանձնակատար Լինկոլն Վիրտի ջանքերով վերոնշյալ նախաձեռնությունը միջազգայնացվեց՝ բացելով հիմնադրամներ նաև խաղաղօվկիանոսյան այլ երկրներում, ինչպիսին են՝ Կուբան, Չինաստանը, Կորեան, Հավայան կղզիները և Ճապոնիան (Genocide Perspectives IV: Essays on Holocaust and Genocide, 2012, 392):

Ճապոնիայում բացված հիմնադրամի ղեկավար էր նշանակվել ճապոնացի առաջատար դրամատեր և արտգործնախարարության փոխնախագահ Էիչի Շիբուսավան, որի շնորհիվ հայերին օգնություն տրամադրելու նպատակով ներգրավել էին Ճապոնիայի հասարակության բոլոր խավերը՝ հասարակ ժողովրդից մինչև կառավարության նախարարներ, ինչպես նաև՝ ավելի քան 100 ճապոնացի գործարարներ: Մեծ օգնություն տրամադրեց հիմնադրամին նաև Ճապոնիայի արքայազն Տոկուգավա Յոսիհիսան (Babkenian, Vicken, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide): «Հայ օգնության ֆոնդի» առանցքային հարցերից էր հայ փախստականների խնդիրը: Հատկանշական է, որ Շիբուսավայի ղեկավարած «Հայ օգնության ֆոնդից» գումար է տրամադրվել նաև Ալեքսանդրապոլում (ներկայիս Գյումրիում) գործող Հայաստանի ամենամեծ որբանոցին (Vardanyan, Anna, Remembering Legacy of Eiichi Shibusawa as He Helped Armenian Refugees during Genocide):

Հայ ժողովրդի բարերար Շիբուսավայի օգնությունը մինչ օրս էլ երախտագիտությամբ է հիշում հայ ժողովուրդը: Դրա վառ ապացույցն է 2021 թ. հուլիսի 23-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի՝ Տոկիո կատարած այցի ընթացքում Շիբուսավայի անվան թանգարան-հիմնադրամում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի «Հենրի Մորգենթաու» հուշամեդալի շնորհումը Էիչի Շիբուսավայի ծոռանը՝ Մասահիդե Շիբուսավային, (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը «Հենրի Մորգենթաու» հուշամեդալ է հանձնել հայ ազգի ճապոնացի բարեկամին, 24.07.2021):

Ճապոնացի ժողովրդի աջակցությունը հայերին չի սահմանափակվել միայն դրամական աջակցությամբ: Մեծ երախտագիտության է արժանի նաև 1922 թ. սեպտեմբերին Զմյուռնիայի քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների ու ասորիների նկատմամբ Օսմանյան կայսրության կողմից դաժան ոճրագործությունից հրաշքով փրկված խուճապահար տարագիրներին ճապոնական «Տոկեի Մարու» կոչվող նավով Հունաստան տարհանելը (Milton, 2008, 247): Ճապոնացի նավապետի քաջության ու բարության շնորհիվ, առանց վարանելու և թուրքական սպառնալիքների անտեսմամբ փրկվեցին 825 հայ ու հույն տարագիրներ (17 Sep 1922: The Brave Stance of the Japanese): Փրկվածների շարքում էր նաև աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի հայրը՝ Նազարեթ Ժամկոչյանը (Վարդանյան, Մարտոյան, 2020, 84):

Ճապոնիայի աջակցությունը հայերին շարունակվեց նաև հետագայում: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո Ճապոնիան նյութական և դրամական զգալի օգնություն է ցուցաբերել Հայաստանին, ինչպես նաև Սպիտակ քաղաքի վերականգնման և վերակառուցման նպատակով երեք անգամ աղետի գոտի է ուղարկել ճապոնացի մասնագետների (Nazarmuhamedov, 2018, Journal of International and Advanced Japanese Studies, 176): Ավելին, 1989 թ. փետրվարին Ճապոնիայի կառավարող Լիբերալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար Սինտարո Աբեն այցելեց Ճապոնիայում Խորհրդային Միության դեսպանություն՝ ցավակցություն հայտնելու Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով մարդկային մեծ զոհերի համար: Ս. Աբեն ԽՍՀՄ դեսպան Ն. Սոլովյովին հանձնեց 39.467.483 իեն, որը նախատեսված էր տարերային աղետից տուժածներին օգնություն ցույց տալու և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար: Այդ միջոցները հանգանակել էին ամբողջ երկրում կուսակցության ծավալած արշավի շրջանակներում, որին անձնական մասնակցություն էր ցուցաբերել Լիբերալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղարը: Ճապոնիայում կազմակերպված մի շարք բարեգործական համերգների ու ցուցահանդեսների ժամանակ ստացված դրամամուտքը նույնպես փոխանցվել էր Հայաստանում տարերային աղետից տուժածների օգնության ֆոնդին (Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 66-67):

Ճապոնիայի կառավարությունը նաև աջակցել է Հայաստանին աղետի գոտում շինարարական աշխատանքներ իրականացնելու հարցում՝ տրամադրելով «Կոմացու», «Հիտաչի», «Կատո» ճապոնական ֆիրմաների 253 շինարարական մեքենա: Հայաստան ուղարկվեց նաև 17 հոգուց բաղկացած ճապոնացի սեյսմոլոգների խումբ՝ Ս. Սուեհիրոյի գլխավորությամբ, որոնց հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց սեյսմոլոգիայ ի ուսեյսմակայուն շինարարության բնագավառում հետագա համագործակցության շուրջ (Report of Japan disaster relief team on earthquack of Spitak, Armenia. USSR, February 1990, 42-51):

Աղետի գոտու վերականգնման նպատակով Ճապոնիան Հայաստանին օգնություն է տրամադրել նաև միջազգային կազմակերպության միջոցով: Այսպես՝ Համաշխարհային բանկի միջոցով Հայաստանին է տրամադրվել 1 մլն ԱՄՆ դոլարի չափով նվիրատվություն

(Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 68): Հատկանշական է, որ աղետի գոտու վերականգնման նպատակով աջակցությունը շարունակվել է նաև հետագայում (The Project for Seismic Risk Assessment and Risk Management Planning in the Republic of Armenia, December 2012, JICA):

Հայ ժողովրդի դժվարին օրերին Ճապոնիայի կողմից մարդասիրական օգնության և աջակցության տրամադրման շնորհիվ հարյուրավոր մարդկանց կյանքերի փրկումը, հայ ժողովրդի մեջ ձևավորել է երախտապարտության ու շնորհապարտության զգացողություն Ճապոնիայի կառավարության ու ճապոնացի ժողովրդի հանդեպ:

2011 թ. մարտի 3-ին Ճապոնիայի արևելյան մասում տեղի ունեցած երկրաշարժի և ցունամիի պատճառով Ֆուկուսիմայում տեղակայված ատոմակայանների վնասման արդյունքում առաջացած աղետը (Fukushima disaster: What happened at the nuclear plant?), և վերջինիս հետևանքով մեծաքանակ զոհերի մասին լուրը ցավի մեծ կսկիծով ընդունվեցին հայերի կողմից: Ճապոնիայի համար այդ դժվարին օրերին Հայաստանը տրամադրեց զգալի օգնություն (Meloyan Ruben, Armenia Approves Relief Aid To Japan Quake Victims), իսկ 2017 թ. ի հիշատակ ճապոնացի զոհերի՝ Սպիտակ քաղաքում տեղակայվեց խաչքար, որը դարձավ երկու ժողովրդների ցավը միավորող հուշակոթող (On the 11th of March (Sat), Ambassador Taguchi attended the memorial ceremony dedicated to the 6th anniversary of the Great East Japan Earthquake held in Spitak City):

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ասել, որ անգնահատելի է այն աջակցությունը, որը մշտապես հայ ժողովուրդը ստացել է ճապոնացիների և Ճապոնիայի կառավարության կողմից, ինչը, անշուշտ, երկու ազգերի միջև բարեկամական հարաբերությունների վառ վկայությունն է:

Ճապոնիայի կառավարության տնտեսական աջակցությունը Հայաստանի Հանրապետությանը: Հայ-ճապոնական հարաբերությունները նոր որակ ստացան Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների սկիզբը դրվեց 1992 թ. սեպտեմբերի 7-ին:

Նորանկախ Հայաստանը, լինելով տնտեսապես թույլ, զարգացող երկիր, առանձնապես հետաքրքրություն չէր ներկայացնում Ճապոնիայի կառավարության համար, և երկկողմ հարաբերությունները սկզբնական փուլում սահմանափակվում էին Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող տնտեսական աջակցությամբ: Ճապոնիայի կողմից տնտեսական աջակցության տեսակը որոշվում էր՝ հաշվի առնելով երկրի տնտեսական աճն ու ՀՆԱ-ի մակարդակը: Ըստ աջակցության տրամադրման տեսակի՝ Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի (Հարությունյան, 2021, 165-184):

Առաջին փուլն ընդգրկում է 1992-1999 թվականները, երբ երկկողմ տնտեսական հարաբերությունները սահմանափակվում էին միայն Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվող անհատույց դրամաշնորհային օգնությամբ՝ նպատակ ունենալով աջակցել նորանկախ պետության տնտեսության վերականգնմանը և ապահովել կայուն տնտեսական աճ:

Ճապոնիայի կողմից Հայաստանին տրամադրվել են հետևյալ դրամաշնորհային աջակցության տեսակները՝

- ✓ դրամաշնորհային աջակցություն հիմնարար մարդկային անվտանգային նախագծերին (Grassroots)*,
- ✓ դրամաշնորհային աջակցություն հիմնարար մշակութային նախագծերին (Grassroots),
- ✓ հասարակ դրամաշնորհային աջակցություն,
- ✓ մշակութային դրամաշնորհային աջակցություն,
- ✓ ոչ նպատակային դրամաշնորհային աջակցություն:

Առաջին դրամաշնորհը՝ 4 մլն ԱՄՆ դոլար, Հայաստանը Ճապոնիայից ստացել է 1993-1994 թթ., որի շնորհիվ գնել է նավթ, դեղորայք, բժշկական սարքավորումներ և էլեկտրական մալուխներ:

Հատկանշական է, որ *ոչ նպատակային դրամաշնորհային* ծրագիր Հայաստանում Ճապոնիան իրականացրել է մեկ անգամ (1997-1998 թթ.)՝ տրամադրելով 500 մլն իեն, որի արդյունքում Հայաստան ներկրվեց նավթամթերք, տպագրական թուղթ, մինի տպարան, փշալար, մարդատար միկրոավտոբուսներ և փոքր տարողությամբ բեռնատարներ (Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ. 2005, 78): Դրամաշնորհները հիմնականում նպատակային են՝ուղղորդված թիրախավորված ոլորտների զարգացմանը և նպատակ ունենալով բարելավել *առողջապահության, սոցիալական ոլորտի ծառայություններն ու պահպանել պատմամշակութային արժեքները*:

Այսպես՝ *առողջապահության բնագավառում* Ճապոնիայի կառավարության կողմից իրականացված ծրագրերից է 1998/1999 ֆինանսական տարվա համար նախատեսված «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի բուժսարքավորումների արդիականացման ծրագիրը (5.395.000 ԱՄՆ դոլար), որն ավարտին հասցվեց 2001 թ. մարտին: Այս ծրագրի շնորհիվ հիվանդանոցը համալրվեց նոր սարքավորումներով: Բուժսարքավորումների արդիականացման հերթական ծրագրերից էր նաև Հակատուբերկուլյոզային հանրապետական, «Նորք» մանկական ինֆեկցիոն, Երևանի թիվ 3 շտապօգնության մանկական հիվանդանոցների համապատասխան սարքավորումներով համալրումը (շուրջ 5 մլն ԱՄՆ դոլար) (Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ. 2005, 79):

2020 թ. Ճապոնիայի կառավարությունը Հայաստանին է տրամադրել մոտ 3,7 մլն ԱՄՆ դոլար՝ թագավարակի հետևանքների հաղթահարման և նոր բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով (“The Provision of Japanese Medical Equipment to the Republic of Armenia”):

Սոցիալական ոլորտի բարելավման նպատակով տրամադրվել են դրամաշնորհներ գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի գնման (2011թ.) («Ճապոնիայի կառավարության «Սակավապահով ֆերմերների համար դրամաշնորհային աջակցություն» 10-րդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան տնօրինելու մասին» ՀՀ կառավարության

* Նշենք, որ «Հիմնարար» ("Grassroots") դրամաշնորհային ծրագրերը Ճապոնիայի կառավարությունը ոչ կառավարական կազմակերպությունների (NGO) միջոցով Հայաստանին է տրամադրում 1999 թվականից սկսած:

որոշում), հրշեջ ծառայությունների ու հակահրդեհային սարքավորումների ձեռքբերման նպատակով (2017 թ.) (Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project "The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City"):

Մշակութային դրամաշնորհային աջակցությունը տրամադրվել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (1999 թ.), Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի (2004 թ.), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համար երաժշտական գործիքների և ձայնային սարքավորումների ձեռքբերման նպատակով (2008 թ.): 2001 թ. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան) տրամադրվել է 49.300.000 ճապ. իեն դրամաշնորհ՝ պատմական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված սարքավորումների ձեռքբերման նպատակով:

«Հիմնարար» ("Grassroots") դրամաշնորհային ծրագրերը, որոնք հիմնականում մարդկության անվտանգության ու մշակութային նախագծերի իրագործմանն են ուղղված, մինչ այժմ իրականացրվել են, դրանց թվում են՝ Մարտունի քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի վերականգնման (67 հազար ԱՄՆ դոլար), հաշմանդամ երեխաներին պրոթեզավորման (50.5 հազար ԱՄՆ դոլար), մանկական բժշկական սարքավորումների տրամադրման (46 հազար ԱՄՆ դոլար), Գեղարքունիքի մարզի դպրոցների կահավորման (79 հազար ԱՄՆ դոլար) ծրագրերը (Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ. 2005, 79): 2008 թ. Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին կրկին շնորհվել է մշակութային դրամաշնորհ, այս անգամ՝ «Grassroots» ծրագրի միջոցով: Մշակութային դրամաշնորհներ են տրամադրվել նաև Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուների վերականգնման համար սարքավորումների վերազինման (2009 թ.), Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման (2017 թ.) (Japan International Cooperation Agency (JICA) Signed on Grant Agreement with Armenia: The Archive of the Public Television will be Digitized), Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտական արվեստի վերականգնման ու պահպանման համար նախատեսված սարքավորումների նորացման (2018 թ.) (Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia) նպատակով:

21 տարվա ընթացքում (1999-2020 թթ.) Ճապոնիայի կառավարության «Grassroots» դրամաշնորհների շնորհիվ ՀՀ-ում ֆինանսավորվել են 81 նախագիծ՝ 6.102.678 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ (Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP)), իսկ ընդհանուր դրամաշնորհային աջակցությունը կազմել է 81.464.285 ԱՄՆ դոլար (Japan's Development Cooperation with the Republic of Armenia):

2021-2022 թթ. ընթացքում «Grassroots» դրամաշնորհների միջոցով ավարտին է հասցվել 11 նախագիծ, մասնավորապես՝ Նոյեմբերյանի կանանց և երիտասարդների համար համայնքային կենտրոնի բացման (70 հազար ԱՄՆ դոլար), Իջևանի թափոնների կառավարման կարողությունների բարձրացման նպատակով աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման (77 հազար ԱՄՆ դոլար), Ղուկասավան գյուղում SS մասնագիտական կենտրոնի ստեղծման (88 հազար ԱՄՆ դոլար), Վայոց ձորի Հորս համայնքում ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցման (84 հազար ԱՄՆ դոլար),

Գյումրիում ու Տաշիրում տարեցների ցերեկային խնամքի կենտրոնների վերականգնման (21 հազար ԱՄՆ դոլար), Արաքսավան գյուղում նոր պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցման (79 հազար ԱՄՆ դոլար), Գյումրիում սոցիալ-կրթական գործազուրկ կենտրոնի բարելավման (26 հազար ԱՄՆ դոլար), Ջուջևան գյուղին խմելու ջրով ապահովման (68 հազար ԱՄՆ դոլար), ականազերծման գործողությունների համար նախատեսված բժշկական ու առաջին օգնության (77 հազար ԱՄՆ դոլար) ծրագրերը: Դեռևս 11 նախագիծ գտնվում է իրագործման փուլում (Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP)):

Այսպիսով՝ դրամաշնորհները հիմնականում միտված էին թիրախավորված ոլորտների, մասնավորապես՝ առողջապահության, սոցիալական, կենցաղային, էկոլոգիական, պատմամշակութային արժեքների պահպանման և կենսամակարդակի բարելավման ապահովմանը:

Երկրորդ փուլի (2000-2004 թթ.) ընթացքում Ճապոնիան սկսեց Հայաստանին տրամադրել փոխառություններ էներգետիկ ոլորտի բարեփոխման ու զարգացման նպատակով: Ընդհանուր առմամբ տրամադրվել է 3 փոխառություն՝ «Էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման՝ ցանցերի վերականգնման ծրագրի» ու երկու փոխառություն «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի նախագծի» իրականացման համար (Japan's Development Cooperation with the Republic of Armenia, 2019):

Երկկողմ տնտեսական համագործակցությանը նոր շունչ հաղորդեցին 2001 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի առաջին պաշտոնական այցը Ճապոնիա և վարչապետ Ջունիչիրո Կոիզումիի հետ հանդիպումը, որի արդյունքում ստորագրվեց համատեղ հայտարարություն «Հայաստանի և Ճապոնիայի միջև բարեկամության և գործընկերության մասին» (Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia): Կողմերը համաձայնվեցին ամրապնդել համագործակցությունն ահաբեկչության դեմ մղվող պայքարում, ջանքեր գործադրել միջուկային զենքի փորձարկումներն արգելելու ուղղությամբ, ինչպես նաև զարգացնել հարաբերությունները քաղաքական, տնտեսական ու մշակութային բնագավառներում: Վերոնշյալ այցի ընթացքում ձեռք բերվեց նաև համաձայնություն Ճապոնիայի կառավարության «Զարգացման պաշտոնական աջակցության» (ԶՊԱ) ծրագրի ներքո Հայաստանում բժշկական և մշակութային դրամաշնորհային նախագծերի իրականացման (Հովհաննիսյան, Ամիրխանյան, Կարապետյան, 2005, 62-63), ինչպես նաև Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) միջոցով Հայաստանի հանքային արդյունաբերության զարգացման վերաբերյալ (Study on Mining Sector Development Master Plan in the Republic of Armenia):

Հայտարարագիրը մեծ նշանակություն ունեցավ երկկողմ տնտեսական հարաբերությունների ամրապնդման հարցում, քանի որ Ճապոնիան օգնության ծրագրերից անցնում կատարեց համագործակցության և զարգացման ծրագրերի իրականացմանը՝ բարենպաստ նախապայմաններ ստեղծելով ՀՀ-ում ճապոնական ուղղակի ներդրումների ու տնտեսական այլ ծրագրերի իրականացման համար:

Երրորդ փուլի (2005 թվականից մինչ օրս) ընթացքում Ճապոնիան ընդլայնեց Հայաստանի Հանրապետության հետ իր համագործակցության շրջանակները և սկսեց տրամադրել տեխնիկական սարքավորումներ՝ մի շարք թիրախավորված ոլորտների զարգացման նպատակով: Այս փուլում Ճապոնիան հստակ տարորոշեց իր աջակցության տրամադրման ուղղվածությունը և Հայաստանի տնտեսության խթանման համար անհրաժեշտ ոլորտների զարգացումը՝ մասնավորապես կարևորելով էներգետիկ ոլորտի, միջին ու մանր բիզնեսի, ինչպես նաև գյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերը: Ճապոնիայի կառավարության կողմից կյանքի են կոչվել Մոր և մանկան առողջության/ վերարտադրողական առողջության (2004-2006 թթ.), սողանքներից տուժած համայնքների զարգացման (2004-2006 թթ.) («Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության Միջազգային համագործակցության գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության միջև ստորագրված համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու մասին), Փոքր և միջին ձեռնարկությունների մարդկային ռեսուրսների զարգացման (2005-2008 թթ.), Սեյսմիկ ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման պլանավորման (2010-2012 թթ.), Տեղական արտադրության զարգացման և տեղական ապրանքանիշերի խթանման (2013-2016 թթ.), Սողանքային աղետների կառավարման (2014-2017 թթ.), Հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար նախատեսված գերժամանակակից սարքավորումների տրամադրման վերաբերյալ (2021 թ.) նախագծերն ու ծրագրերը (Միայն հնագույն պատմություն ունեցող ժողովուրդը կարող է այսպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը) (Activities in Armenia, JICA's Projects in Armenia):

Ճապոնիան իր այս տնտեսական քաղաքականության շնորհիվ մեծապես աջակցում և նպաստում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտների զարգացմանը:

2018 թ. Ճապոնիայի արտգործնախարար Տարո Կոնոյի Հայաստան կատարած առաջին այցելությունն ազդարարեց հայ-ճապոնական հարաբերությունների *նոր փուլ*, որի ժամանակ կարևորվեց բանկային, նորարարության, սննդի անվտանգության, տեղեկատվական տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մշակութային փոխանակումների, գիտական և կրթական ոլորտներում երկկողմ հարաբերությունների զարգացումը: Հայաստանի ու Ճապոնիայի միջև ստորագրվեց ներդրումների ազատականացման վերաբերյալ համաձայնագիր, որը տարածաշրջանում առաջինն էր («Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջեւ ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագիր): Այն սկիզբ դրեց տնտեսական փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը:

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների հակամարտության հետևանքով ի հայտ եկած հումանիտար ճգնաժամի հաղթահարման և Արցախից տարհանված հայերին աջակցելու նպատակով 2021 թ. փետրվարին Ճապոնիայի ժողովրդի կողմից Հայաստանին տրամադրվեց 3,6 մլն ԱՄՆ դոլարի աջակցություն, որի արդյունքում 6 հիվանդանոցներ համալրվեցին բժշկական սարքավորումներով, վերանորոգվեցին 3 տարհանման

կենտրոններ, 4000 հոգի ստացավ ձմռան համար անհրաժեշտ ապրանքներ, 2300 հոգի ստացավ հիգենայի պարագաներ և այլն (The United Nations welcomes Japan's contribution to support people displaced from Nagorno-Karabakh and host communities in Armenia):

Այսպիսով՝ հայ-ճապոնական բարեկամական հարաբերությունները, ճապոնացի ժողովրդի կողմից հայ ժողովրդին մշտապես աջակցումը, անկախության վերականգնումից հետո տնտեսական զարգացման խթանմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի, փոխառությունների ու տեխնիկական աջակցության տրամադրումն աստիճանաբար հենք են դառնում տնտեսական ոլորտում հավասար գործընկերային հարաբերությունների և հետագայում ավելի շատ համագործակցային ոլորտների ձևավորման համար:

Եզրակացություններ:

- Այսպիսով՝ հայ-ճապոնական առնչությունները, որոնց սկիզբը, ըստ մեզ հասած տեղեկությունների, դրվել է դեռևս մի քանի դար առաջ, ընդգրկում են առևտրային ու տնտեսական համագործակցության ոլորտները:
- Շատ կարևոր է այն փաստը, որ ճապոնական մամուլի կողմից պարբերաբար լուսաբանվել են Հայկական հարցը ու հայերի նկատմամբ կիրառվող թուրքական վայրագությունները, և այդ հարցերը գտնվել են Ճապոնիայի կառավարության մշտադիտական ուշադրության կենտրոնում:
- Ճապոնացիների շնորհիվ և Ճապոնիայի կառավարության կողմից հայոց ցեղասպանությունից տուժածներին աջակցության տրամադրմամբ փրկվեցին հարյուր հազարավոր հայեր: Աջակցությունը ոչ միայն պետական մակարդակով էր իրականացվում, այլև հասարակ ճապոնացի ժողովրդի շնորհիվ: Հետագայում նաև Ճապոնիայի կառավարությունն աջակցություն տրամադրեց 1988 թ. Սպիտակի երկրաշարժի տուժածներին և աղետի գոտու վերականգնման հարցերում:
- Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության անկախությունը նոր հարաբերությունների սկիզբ դրեց երկու երկրների միջև: Ճապոնիան իր տնտեսական քաղաքականության շնորհիվ աջակցում էր Հայաստանին՝ տրամադրելով անփոխհատույց դրամաշնորհներ, էներգետիկ ոլորտի զարգացման նպատակով փոխառություններ, ինչպես նաև տեխնիկական սարքավորումներ՝ տնտեսության մի շարք այլ ոլորտների զարգացումը խթանելու համար:
- Վերջին շրջանում նկատվում են միտումներ տնտեսության ոլորտում հավասար գործընկերային համագործակցության ու փոխշահավետ տնտեսական հարաբերությունների ձևավորման ուղղությամբ: Երկկողմ հարաբերությունները, անշուշտ, ունեն մեծ ներուժ նորովի զարգանալու և ավելի սերտ համագործակցություն հաստատելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Առաքելյան Գ. (2006),** Երևան քաղաքի արդյունագործությունը XIX դարի երկրորդ կեսին, Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան, էջ 31:

2. **Բախչինյան Ա. (2018),** Հայ-ճապոնական պատմական և մշակութային առնչությունները, Երևան, հեղինակային հրատ., էջ 267:

3. Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագիր, 14.02.2018, http://www.parliament.am/draft_docs7/K-019_hamadzaynagir.pdf:

4. Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության Միջազգային համագործակցության գործակալության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության միջև ստորագրված համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու մասին, 29.03.2004, http://www.irtek.am/views/act.aspx?aid=24469:

5. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը «Հենրի Մորգենթաու» հուշամեդալ է հանձնել հայ ազգի ճապոնացի բարեկամին, 24.07.2021, http://www.genocide-museum.am/arm/24.07.21.php?fbclid=IwAR20sHYbm_S56yRNIEc16CRXIrRHUYohv4ViO-OFxxF4Iz2bOERuzQr7vPw:

6. **Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ. (2005),** Հայաստան-Ճապոնիա. Քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ, Երևան, «Զանգակ-97», էջ 180+144 (երկլեզու):

7. Միայն հնագույն պատմություն ունեցող ժողովուրդը կարող է այսպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը, 23.07.2021, https://escs.am/am/news/9318?fbclid=IwAR3o48AtmNrAKN-LQrxdgjc3oEiwG9jJRSfe5_GJ6quy3KcirTCXjhA5vB8:

8. Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման դրամաշնորհային ծրագրի պայմանագրի ստորագրման արարողություն, https://www.am.emb-japan.go.jp/files/100144363.pdf?fbclid=IwAR1CP17DsZkXTeODfiDllC5iwHOONRoTEwueuFGi_V2WE7uR6Rq3nlK6U8U:

9. **Վարդանյան Ա., Մարտոյան Թ. (2020),** Ճապոնական նավի հետագծով. Զմյուռիայի հայերի և հույների փրկուղին, Ցեղասպանագիտական հանդես, հ. 8 (2), էջ 76-95:

10. Ճապոնիայի կառավարության «Սակավապահով ֆերմերների համար դրամաշնորհային աջակցություն» 10-րդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան տնօրինելու մասին, ՀՀ կառավարություն որոշում, 17.02.2011թ., https://www.e-gov.am/gov-decrees/item/19075/:

11. Հարությունյան Ե. (2021), Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը Հայաստանում (1992-2021 թթ.)// «Բանբեր Արևելագիտության ինստիտուտի», հատոր 1, համար 2, էջ 165-185:

12. The Brave Stance of the Japanese, Embros, 17 Sep 1922, https://www.greek-genocide.net/index.php/27-bibliography?start=18.

13. Activities in Armenia, JICA's Projects in Armenia, https://www.jica.go.jp/armenia/english/activities/index.html.

14. Armenia Approves Relief Aid to Japan Quake Victims, 08.04.2011, https://www.azatutyun.am/a/3550393.html .

15. Babkenian V., Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, The Armenian Weekly, 10.11.2010, https://armenianweekly.com/2010/11/10/cuba-china-korea-hawaii-and-the-armenian-genocide/.

16. Babkenian V., Japan and the Armenian Genocide, The Armenian Weekly, 29.09.2010, https://armenianweekly.com/2010/09/29/japans-forgotten-international-humanitarian-relief-episode/.

17. Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project "The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City", Webiste of Japan International Cooperation Agency, https://www2.jica.go.jp/en/evaluation/pdf/2013_0867940_4_f.pdf.

18. Fukushima Disaster: What Happened at the Nuclear Plant? 10.03.2021, https://www.bbc.com/news/world-asia-56252695.

19. Genocide Perspectives IV: Essays on Holocaust and Genocide 2012, edit. Colin Tatz, University of Technology Sydney, p. 392.

20. Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia, Website of Japan International Cooperation Agency, 16.02.2018, https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/press180216.html.

21. Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP), https://www.am.emb-japan.go.jp/itprtop_en/index.html.

22. Hovhannisyan A., Japanese Media Coverage of the Armenian Genocide, 1894-1920s, 08.05.2021, https://mirrorspectator.com/2021/05/08/japanese-media-coverage-of-the-armenian-genocide-1894-1920s/.

23. Japan International Cooperation Agency (JICA) Signed on Grant Agreement with Armenia: The Archive of the Public Television will be Digitized, Webiste of Japan International Cooperation Agency, 30.03.2017, https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/170330.html.

24. Japan's Development Cooperation with the Republic of Armenia, 2019, https://www.mofa.go.jp/files/000476406.pdf.

25. Japan's Development Cooperation with the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2019, https://www.mofa.go.jp/files/000476406.pdf.

26. Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia, 19.12.2001, https://www.mofa.go.jp/region/europe/armenia/joint0111.html.

27. Milton Giles 2008, Paradise Lost: Smyrna 1922 - The Destruction of Islam's City of Tolerance, London, p. 464.

28. Nazarmuhamedov B. 2018, Japan's ODA Policy toward Central Asia and the Caucasus an Analysis of Japanese Assistance to Economic Development in Kyrgyzstan and Armenia, Journal of International and Advanced Japanese Studies, University of Tsukuba, V. 10, pp. 169-185.

29. On the 11th of March (Sat), Ambassador Taguchi Attended the Memorial Ceremony Dedicated to the 6th Anniversary of the Great East Japan Earthquake Held in Spitak City, 15.03.2017, https://www.am.emb-japan.go.jp/itpr_en/b_000108en.html.

30. Report of Japan Disaster Relief Team on Earthquake of Spitak, Armenia. USSR, February 1990, 42-51, https://openjicareport.jica.go.jp/pdf/10868198_01.pdf.

31. Study on Mining Sector Development Master Plan in the Republic of Armenia, Japan International Cooperation Agency, October 2003, https://openjicareport.jica.go.jp/pdf/11734415_01.pdf .

32. The Project for Seismic Risk Assessment and Risk Management Planning in the Republic of Armenia, December 2012, JICA, https://openjicareport.jica.go.jp/pdf/12086047.pdf.

33. The Provision of Japanese Medical Equipment to the Republic of Armenia, 30.06.2020, https://www.am.emb-japan.go.jp/files/100070007.pdf.

34. The United Nations welcomes Japan's contribution to support people displaced from Nagorno-Karabakh and host communities in Armenia, 19.02.2021, https://www.unicef.org/armenia/en/press-releases/united-nations-welcomes-japans-contribution-support-people-displaced-nagorno.

35. Vardanyan A., Remembering Legacy of Eiichi Shibusawa as He Helped Armenian Refugees during Genocide, 21.04.2022, https://mirrorspectator.com/2022/04/21/remembering-legacy-of-eiichi-shibusawa-as-he-helped-armenian-refugees-during-genocide/?fbclid=IwAR3wRWtQ3-z1VluvGQv2FxdJXt_CE-Uvj_KAzaRHwqmPNDYxJa2h_QTm7hg.

REFERENCES

1. **Arak'jelyan G. (2006),** JErewan k'aghak'i ardyunagortsut'yunĕ XIX dari jerkrord kjesin, Gitakan hodvatsnjeri zh'oghovatsu` nvirvats JErewani patmut'yan harts'jerin, JErewan, ēj 31:

2. **Bakhch'inyan A. (2018),** Hay-chaponakan patmakan ew mshakut'ayin arnch'ut'yunnjerĕ, JErewan, hjeghinakayin hrat., ēj 267:

3. Hayastani Hanrapjetut'yan ew CHaponiayi mijew njerdrumnjeri azatakanats'man, khrakhusman ew pashtpanut'yan masin» hamadzaynagir, 14.02.2018, http://www.parliament.am/draft_docs7/K-019_hamadzaynagir.pdf:

4. Hayastani Hanrapjetut'yunum soghank'ayin aghjeti karavarman usumnasirut'yun» tsragri shrjanaknjerum CHaponiayi karavarut'yan Mijazgayin hamagortsakts'ut'yan gortsakalut'yan ew Hayastani Hanrapjetut'yan k'aghak'ashinut'yan nakhararut'yan mijew storagrvats hamadzaynagrov nakhatjesvats mijots'arumnjerĕ nakhapatrastjelu ew irakanats'njelu masin, 29.03.2004, http://www.irtek.am/views/act.aspx?aid=24469:

5. Hayots' ts'jeghaspanut'yan t'angaran-institutĕ «Hjenri Morgjent'au» hushamjedal ē handznjel hay azgi chaponats'i barjekamin, 24.07.2021, http://www.genocide-museum.am/arm/24.07.21.php?fbclid=IwAR20sHYbm_S56yRNIEc16CRXIrRHUYohv4ViO-OFxxF4Iz2bOERuzQr7vPw:

6. **Hovhannisyan N., Amirkhanyan M., Karapjetyan R. (2005),** Hayastan-CHaponia. K'aghak'akan, tntjesakan, mshakut'ayin ew gitakan harabjerut'yunnjer, JErewan, «Zangak-97», ēj 180+144 (jerkljezu):

7. Miayn hnaguyn patmut'yun unjets'ogh zh'oghovurdĕ karogh ē ayspjes gnahatjel mjek ayl hnaguyn zh'oghovrdi patmamshakut'ayin zh'arangut'yunĕ, 23.07.2021, https://escs.am/am/news/9318?fbclid=IwAR3o48AtmNrAKN-LQrxdgjc3oEiwG9jJRSfe5_GJ6quy3KcirTCXjhA5vB8:

8. Ijewan k'aghak'um t'ap'onnjeri karavarman karoghut'yunnjerĕ bardzrats'njelu hamar aghbahavak' mjek'jenayi ew aghbamannjeri tramadrman dramashnorhayin tsragri paymanagri storagrman araroghut'yun, https://www.am.emb-

japan.go.jp/files/100144363.pdf?fbclid=IwAR1CP17DsZkXTeODfiDllC5iwHOONRoTEwueuFGi_V2WE7uR6Rq3nlK6U8U:

9. **Vardanyan A., Martoyan T‘. (2020),** CHaponakan navi hjetagtsov. Zmyuriayi hayjeri ew huynjeri p‘rkughin, TS‘jeghaspanagitakan handjes, h. 8 (2), ēj 76-95:

10. Chaponiayi karavarut‘yan «Sakavapahov fjermjernjeri hamar dramashnorhayin ajakts‘ut‘yun» 10-rd dramashnorhayin tsragri shrjanaknjerum Hayastani Hanrapjetut‘yun njerkrvats gyughatntjesakan tjekhnikan tnōrinjelu masin, HH karavarut‘yun oroshum, 17.02.2011t‘., https://www.e-gov.am/gov-decrees/item/19075/:

11. Harut‘yunyan JE. (2021), Chaponiayi tntjesakan k‘aghak‘akanut‘yunĕ Hayastanum (1992-2021 t‘t‘.)// «Banbjer Arewjelagitut‘yan instituti», hator 1, hamar 2, ēj 165-185:

12. The Brave Stance of the Japanese, Embros, 17 Sep 1922, https://www.greek-genocide.net/index.php/27-bibliography?start=18.

13. Activities in Armenia, JICA's Projects in Armenia, https://www.jica.go.jp/armenia/english/activities/index.html.

14. Armenia Approves Relief Aid to Japan Quake Victims, 08.04.2011, https://www.azatutyun.am/a/3550393.html .

15. Babkenian V., Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, The Armenian Weekly, 10.11.2010, https://armenianweekly.com/2010/11/10/cuba-china-korea-hawaii-and-the-armenian-genocide/.

16. Babkenian V., Japan and the Armenian Genocide, The Armenian Weekly, 29.09.2010, https://armenianweekly.com/2010/09/29/japans-forgotten-international-humanitarian-relief-episode/.

17. Ex-Post Evaluation of Japanese ODA Grant Aid Project “The Project for Improvement of Fire Fighting Equipment in Yerevan City”, Webiste of Japan International Cooperation Agency, https://www2.jica.go.jp/en/evaluation/pdf/2013_0867940_4_f.pdf.

18. Fukushima Disaster: What Happened at the Nuclear Plant? 10.03.2021, https://www.bbc.com/news/world-asia-56252695.

19. Genocide Perspectives IV: Essays on Holocaust and Genocide 2012, edit. Colin Tatz, University of Technology Sydney, p. 392.

20. Grant Agreement Signed between JICA and the Government of the Republic of Armenia, Website of Japan International Cooperation Agency, 16.02.2018, https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/press180216.html.

21. Grant Assistance for Grassroots Human Security Projects (GGP), https://www.am.emb-japan.go.jp/itprtop_en/index.html.

22. Hovhannisyan A., Japanese Media Coverage of the Armenian Genocide, 1894-1920s, 08.05.2021, https://mirrorspectator.com/2021/05/08/japanese-media-coverage-of-the-armenian-genocide-1894-1920s/.

23. Japan International Cooperation Agency (JICA) Signed on Grant Agreement with Armenia: The Archive of the Public Television will be Digitized, Webiste of Japan International Cooperation Agency, 30.03.2017, https://www.jica.go.jp/uzbekistan/english/office/topics/170330.html.

24. Japan’s Development Cooperation with the Republic of Armenia, 2019, https://www.mofa.go.jp/files/000476406.pdf.

25. Japan's Development Cooperation with the Republic of Armenia, Website of Ministry of Foreign Affairs of Japan, 2019, https://www.mofa.go.jp/files/000476406.pdf.

26. Joint Statement on Friendship and Partnership between Japan and the Republic of Armenia, 19.12.2001, https://www.mofa.go.jp/region/europe/armenia/joint0111.html.

27. Milton Giles 2008, Paradise Lost: Smyrna 1922 - The Destruction of Islam's City of Tolerance, London, p. 464.

28. Nazarmuhamedov B. 2018, Japan's ODA Policy toward Central Asia and the Caucasus an Analysis of Japanese Assistance to Economic Development in Kyrgyzstan and Armenia, Journal of International and Advanced Japanese Studies, University of Tsukuba, V. 10, pp. 169-185.

29. On the 11th of March (Sat), Ambassador Taguchi Attended the Memorial Ceremony Dedicated to the 6th Anniversary of the Great East Japan Earthquake Held in Spitak City, 15.03.2017, https://www.am.emb-japan.go.jp/itpr_en/b_000108en.html.

30. Report of Japan Disaster Relief Team on Earthquake of Spitak, Armenia. USSR, February 1990, 42-51, https://openjicareport.jica.go.jp/pdf/10868198_01.pdf.

31. Study on Mining Sector Development Master Plan in the Republic of Armenia, Japan International Cooperation Agency, October 2003, https://openjicareport.jica.go.jp/pdf/11734415_01.pdf

32. The Project for Seismic Risk Assessment and Risk Management Planning in the Republic of Armenia, December 2012, JICA, https://openjicareport.jica.go.jp/pdf/12086047.pdf.

33. The Provision of Japanese Medical Equipment to the Republic of Armenia, 30.06.2020, https://www.am.emb-japan.go.jp/files/100070007.pdf.

34. The United Nations welcomes Japan's contribution to support people displaced from Nagorno-Karabakh and host communities in Armenia, 19.02.2021, https://www.unicef.org/armenia/en/press-releases/united-nations-welcomes-japans-contribution-support-people-displaced-nagorno.

35. Vardanyan A., Remembering Legacy of Eiichi Shibusawa as He Helped Armenian Refugees during Genocide, 21.04.2022, https://mirrorspectator.com/2022/04/21/remembering-legacy-of-eiichi-shibusawa-as-he-helped-armenian-refugees-during-genocide/?fbclid=IwAR3wRWtQ3-z1VluvGQv2FxdJXt_CE-Uvj_KAzaRHwqmPNDYxJa2h_QTm7hg

Ներկայացվել է՝ 05.03.2022	Received 05.03.2022	Получено: 05.03.2022
Գրախոսվել է՝ 07.07.2022	Reviewed 07.07.2022	Рассмотрено: 07.07.2022
Ընդունվել է՝ 25.08.2022	Accepted 25.08.2022	Принято: 25.08.2022

E-mail: yeva.harutyunyan85@gmail.com